ANDERSEN®

Հեղինակ՝

Միսակ Բաբաջանյան
Լենա Միտիչյան
Անահիտ Զաքարյան

Բովանդակություն

Կատարողական իրավունքի ոլորտում նոր կարգավորումներ: Ինչպես կաշխատի նոր օրենքը:

Կատարողական իրավունքի ոլորտում նոր կարգավորումներ: Ինչպես կաշխատի նոր օրենքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանում բավականին լայն քննարկման առարկա է դարձել «Կատարողական վարույթի մասին» ՀՀ նոր օրենքը (այսուհետ՝ «Օրենք»), որը, ուժի մեջ մտնելով 2026 թվականի հունվարի 01-ից, սահմանում է ամբողջությամբ նոր ընթացակարգեր ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ: Նշված էական փոփոխություններից մի քանիսը ներկայացնում ենք ստորև.

1. **ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՉ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԺԱՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ (ԱՍՏՐԵՆՏ):**

Ոչ դրամական պահանջներն ընդհանուր առմամբ բաժանվում են երկու մասի՝

ա) պահանջներ, որոնք հնարավոր է կատարել հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ (օրինակ՝ վտարել, պայմանագիր կնքելուն հարկադրել),
բ) պահանջներ, որոնք կամ իրավաբանորեն հնարավոր չէ կատարել հարկադիր կատարման միջոցներով (պարտավորեցնել ներողություն խնդրել, հերքել տեղեկությունները, տրամադրել տեղեկություններ), կամ դրանց հարկադիր կատարումը գործնականում անհամաչափ դժվար է (օրինակ՝ պարտավորեցնել ապամոնտաժել մեծածավալ և տեխնիկապես բարդ կառույցը):

Նախկինում, եթե Ձեր ունեցած երկրորդ խմբի ոչ դրամական պահանջը բավարարվեր, և մյուս կողմը չկատարեր այդ պահանջը, հարկադիր կատարողին այլ ելք չէր մնում, քան քրեական օրենսգրքով նախատեսված ընթացակարգերը կիրառելը: Մինչդեռ, նույնիսկ քրեական գործընթաց սկսելու պարագայում բացառված չէին իրավիճակները, երբ պարտապանը կարող էր խուսափել դատական ակտի կատարումից անգամ քրեական ոչ խիստ սանկցիաների ենթարկվելու գնով: Այդ իրավիճակում Դուք կարող էիք պահանջել միայն նյութական փոխհատուցում, սակայն դա էլ միանշանակ չէ, քանի որ որոշ դեպքերում հնարավոր չէ ընդհանրապես վնասը հաշվել կամ նույնիսկ ցույց տալ, որ առկա է վնաս:

Ներկայումս այս կարգավորումը Ձեզ հնարավորություն կտա դրական ելքով դատական ակտ ունենալու դեպքում տույժ գանձել մյուս կողմից, եթե վերջինս խուսափի Ձեր ոչ դրամական պահանջը կատարելուց:

- **Աստրենտի մասին ընդհանուր տեղեկատվություն.**

Աստրենտը, ինչպես արդեն նշեցինք, ոչ դրամական պահանջը չկատարելու համար կիրառվող տուժանքն է: Աստրենի (astreinte) ինստիտուտը ձևավորվել է ֆրանսիական իրավունքում և

հետագայում փոխառվել է Եվրոպական մի շարք պետությունների կողմից։ Դատարանը կարող է Ձեր պահանջով կիրառել աստրենտ և մյուս կողմին պարտավորեցնել Ձեզ վճարել տուժանք այն դեպքում, երբ վերջինս չի կատարել դատական ակտով հաստատված ոչ դրամական պահանջը։ Օրինակ՝ Դուք դիմել եք դատարան և պահանջել, որպեսզի դատարանը պարտավորցենի X-ին հրապարակայնորեն ներողություն խնդրել Ձեզ վիրավորելու համար։ Եթե դատարանը բավարարի Ձեր պահանջը, սակայն X-ը չկատարի այն, Ձեր պահանջով դատարանը կարող է պարտավորեցնել X-ին Ձեզ վճարել տուժանք։

Կարևոր է աստրենտի ինստիտուտը չշփոթել վնասի հետ։ Աստրենտը վնասի հետ որևէ կապ չունի. տուժանքը նշանակելու համար բացարձակապես պարտադիր չէ, որ Ձեզ վնաս պատճառված լինի դատական ակտը չկատարելու հետևանքով։

Աստրենտը նշանակվում է համապատասխան ոչ դրամական պահանջը սահմանող եզրափակիչ դատական ակտով, եթե դրա մասին ներկայացվել է առանձին հայցապահանջ (նախնական աստրենտ)։

Եթե Ձեր կողմից ներկայացված հայցադիմումում չեք պահանջել նշանակել նախնական աստրենտ, ապա աստրենտ կարող եք պահանջել նաև դատական ակտը կայացվելուց հետո։ Բացի այդ, կարող եք, ըստ անհրաժեշտության, ինչպես փոխել աստրենտի չափը, այնպես էլ դադարեցնել այն։

Սակայն, պետք է ուշադիր լինեք, քանի որ Ձեր նկատմամբ ևս կարող է կիրառվել այս ինստիտուտը, եթե Դուք եք դատական ակտով պարտավորվել կատարել որոշակի գործողություն կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, սակայն խախտել եք դատական ակտը։

- **Աստրենտի չափը և դրա հաշվարկը.**

Օրենքով աստրենտի կիրառման համար տարբեր չափեր են սահմանվում։ Մասնավորապես, պետք է հասկանալ, արդյոք այդ տուժանքի նշանակումը պահանջվել է մինչև դատական ակտի կայացումը (նախնական աստրենտ), թե դրանից հետո (վերջնական աստրենտ)։

<u>ՆԱԽՆԱԿԱՆ ԱՍՏՐԵՆՏԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԵՐՈՎ՝</u>

- Եթե պետք է կատարվեր որոշակի գործողություն, սակայն չի կատարվել, ապա նման պահանջի առաջին խախտման դեպքում՝ 100,000 ՀՀ դրամի չափով, իսկ կետանցի յուրաքանչյուր հետագա օրվա համար՝ 5,000 ՀՀ դրամի չափով,
- Եթե պետք է կատարվեր գործողություն որևէ պարբերականությամբ, ապա այդ գործողությունը կատարելու պահանջի խախտման առաջին դեպքի համար՝ 100,000 ՀՀ դրամի չափով, իսկ խախտման յուրաքանչյուր հաջորդ դեպքի համար՝ 5,000 ՀՀ դրամի չափով,
- որոշակի գործողությունների կատարումն արգելելու պահանջի խախտման առաջին դեպքի համար՝ 100,000 ՀՀ դրամի չափով, իսկ խախտման յուրաքանչյուր հաջորդ դեպքի համար՝ 5,000 ՀՀ դրամի չափով։

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՍՏՐԵՆՏԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՉԱՓԵՐՈՎ՝

- Վերջնական աստրենտի չափը որոշում է դատարանը՝ այն հաշվով, որ այն բավարար լինի պարտապանին ոչ դրամական պարտավորության կատարմանն ուղղորդելու համար։
- Դատարանը Ձեր միջնորդությամբ կարող է սահմանել նաև աճողական աստրենտ, որի պարագայում աստրենտի չափն ավելանում է կատարման կետանցի որոշակի ժամկետ կամ պահանջի խախտման դեպքերի որոշակի քանակ լրանալուց հետո։
- Վերջնական աստրենտի չափը բոլոր դեպքերում կետանցի մեկ օրվա (խախտման մեկ դեպքի) համար սահմանվում է ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամը, և ոչ ավելի, քան 500,000 ՀՀ դրամը։

Ուշադիր եղեք, քանի որ, եթե նշանակված չի եղել նախնական աստրենտ, ապա վերջնական աստրենտ նշանակելու դիմում կարող եք ներկայացնել եզրափակիչ դատական ակտով հաստատված պարտավորության առաջին խախտումից հետո՝ **մեկ տարվա ընթացքում։** Ընդ որում, վերջնական աստրենտ նշանակելու (ներառյալ նախնական աստրենտի չափը փոփոխելու), աստրենտը դադարեցնելու դիմումները անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ոչ դրամական պահանջով հայցը քննած առաջին ատյանի դատարան (վարչական դատարան)։

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՈՒՄ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԲԱԺՆԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ։

Օրենքի նախկին կարգավորումների շրջանակում, եթե հարկադիր կատարողի կողմից հայտնաբերվում է ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի վրա բռնագանձում տարածելու անհրաժեշտություն, ապա հարկադիր կատարողն առաջարկում է պարտատիրոջը լրացուցիչ հայց ներկայացնել պարտապանի դեմ՝ իր բաժինն առանձնացնելու համար։ Սա ստիպում է անձանց ներգրավվել լրացուցիչ դատական գործընթացի մեջ, անցնել երկարաժամկետ և բարդ ընթացակարգ, որից հետո պարզ չէ՝ անձը կկարողանա բավարարում ստանալ այնուամենայնիվ, թե ոչ։

Ներկայումս, այս մասով ևս կատարվել է համապատասխան փոփոխություն Օրենքում, ինչի արդյունքում այն գործողությունների կատարումը, որոնք նախկինում հնարավոր էր կատարել միայն դատարանի որոշմամբ, ներկայումս փոխանցվել է հարկադիր կատարողին։

Մասնավորապես, հարկադիր կատարողը կարող է արգելանք կիրառել պարտապանի բաժնի վրա, իսկ եթե համատեղ սեփականություն է, և որոշված բաժին առկա չէ, ապա՝ ամբողջ գույքի վրա։ Հարկադիր կատարողն իրավասու է նաև կայացնել որոշում պարտապանի բաժինն առանձնացնելու մասին, եթե այն հնարավոր է կատարել։ Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փորձագետի եզրակացություն, հարկադիր կատարողը կարող է նաև նշանակել փորձաքննություն։

Այն դեպքում, երբ պարզվում է, որ գույքը հնարավոր չէ բաժանել և առանձնացնել պարտապանի բաժինը, ապա հարկադիր կատարողը կազմակերպում է գույքի վաճառքը և ստացված գումարը ընդհանուր սեփականատերերի մեջ բաշխելը։

Ընդ որում, այս գործընթացում պահպանվում են նաև մյուս սեփականատերերի շահերը։ Օրինակ, եթե Դուք հանդիսանում եք համասեփականատեր, և որոշում է կայացվել գույքը վաճառել, սակայն Դուք չեք ուզում կորցնել Ձեր սեփականությունը, ապա կարող եք վճարել դեպոզիտ (պարտապանի բաժնի 3 տոկոսի չափով) և հարկադիր կատարողը աճուրդը հետաձգում է, և եթե սահմանված ժամկետում Դուք մյուս հատվածը գումարի ևս վճարում եք, ապա հարկադիր կատարողը նշված բաժինը վաճառում է Ձեզ։

Այստեղ ռիսկն այն է, որ եթե համապատասխան ժամկետում մնացած գումարը չվճարեցիք, ապա Ձեր կողմից տրված կանխավճարը կուղղվի պարտավորությունների կատարմանը։

Այն դեպքում, երբ գույքից հնարավոր է առանձնացնել պարտապանի բաժինը, ապա հարկադիր կատարողը այդ բաժինն է հանում վաճառքի։

Այսպիսով, հարկադիր կատարողին տրվել է այս գործընթացում լայն իրավասություններ՝ պարտատիրոջը հնարավորություն ընձեռելով ստանալ իր պարտավորությունների կատարումը՝ ազատելով իրեն լրացուցիչ գործընթացներով անցնելուց/գումարներ ծախսելուց։

3. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆԶՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ։

Նույն այն խնդիրները, որոնք ներկայացված են ընդհանուր սեփականության ներքո գտնվող անշարժ գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու մասով նախկինում առկա խնդիրների վերաբերյալ, առկա են եղել նաև առևտրային կազմակերպություններում պարտապանի մասնակցության հետ կապված իրավունքների վրա բռնագանձում տարածելու պարագայում։ Այս դեպքում ևս խնդրահարույց էր առանց լրացուցիչ դատական գործընթացների բաժնեմասերի, բաժնետոմսերի վրա կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձում տարածելը։

Հարկադիր կատարողին այսուհետ տրվել է իրավասություն տնտեսական ընկերակցությունների բաժնեհավաք կապիտալում ընկերակցության լիակատար ընկեր կամ ավանդատու պարտապանի բաժնեմասի, տնտեսական ընկերությունների կանոնադրական կապիտալում պարտապանի բաժնեմասի, բաժնետոմսերի, կոոպերատիվների փայերի վրա արգելանք դնելու դեպքում պարտավորեցնել իրավաբանական անձին՝ պարտապանին տրամադրման ենթակա շահաբաժինները, գրանցման ոչ ենթակա շարժական գույքը տրամադրել հարկադիր կատարողին, իսկ դրամական միջոցները փոխանցել պարտապանի հաշվին կամ հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին։

Նոր կարգավորումների շրջանակում լայն պարտավորություններ են դրվել նաև իրավաբանական անձանց վրա, մասնավորապես՝ իրավաբանական անձը պարտավոր է

հարկադիր կատարողի պահանջով նրան տրամադրել պարտապանի բաժնեմասի (բաժնետոմսերի, փայերի) գնահատման համար անհրաժեշտ՝ իրավաբանական անձի գործունեության, ակտիվների և պարտավորությունների մասին տեղեկություններ։

Այն դեպքում, եթե առկա են անձինք, ովքեր կարող են օգտվել բաժնեմասի (բաժնետոմսերի, փայերի) գնելու նախապատվության իրավունքից, ապա հարկադիր կատարողը մինչև աճուրդի իրականացումը կազմակերպում է նաև համապատասխան անձանց ծանուցման և նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացը։

Եթե Դուք, օրինակ, հանդիսանում եք նման բաժնեմասի (բաժնետոմսերի, փայի) գնման նախապատվություն ունեցող անձ և ցանկանում եք գնել այն, ապա 6 շաբաթվա ընթացքում անհրաժեշտ է այդ մասին տեղյակ պահել հարկադիր կատարողին, ով 5 օրվա ընթացքում համապատասխան բաժնեմասը (բաժնետոմսերը, փայը) կվաճառի Ձեզ շուկայական արժեքով։

Եթե նման պահանջով մի քանի հոգի դիմի, ապա վերջիններիս հարկադիր կատարողը կվաճառի իրենց ունեցած բաժնեմասի (բաժնետոմսերի, փայի) չափերին համամասնորեն, իսկ եթե նման կերպ հնարավոր չէ որոշել համամասնությունը, ապա հավասար չափերով։

Եթե նախապատվությունից օգտվող անձինք չեն հայտնվում, ապա բաժնեմասը (բաժնետոմսերը, փայը) վաճառվում է հարկադիր կարգով։ Իսկ եթե 5 հարկադիր աճուրդների ընթացքում ևս չի իրացվում տնտեսական ընկերակցության լիակատար ընկեր պարտապանի բաժնեմասը, սահմանափակ պատասխանատվությամբ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասնակից պարտապանի բաժնեմասը, ապա համապատասխան իրավաբանական անձը հարկադիր կատարողի պահանջով մեկամսյա ժամկետում իր գույքից առանձնացնում է պարտապանի բաժնեմասի շուկայական արժեքին համապատասխանող գույք՝ դրա վրա բռնագանձում տարածելու նպատակով։ Հարկադիր կատարողը կարող է նշանակել փորձաքննություն առանձնացված գույքի արժեքի և պարտապանի բաժնեմասի արժեքի համապատասխանությունը ստուգելու նպատակով։

4. ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ.

- **Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ ներկայացված դրամական պահանջների կատարումը.**

Եթե ունեք պահանջներ ներկայացված կամ ներկայացվելիք Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ, ապա կարևոր է իմանալ, որ Հայաստանի Հանրապետության գույքը, ներառյալ դրամական միջոցները բռնագանձման ենթակա չեն, բացառությամբ եթե այդ գույքը Ձեր օգտին եղել է գրավ դրված։

Եթե առկա է Հայաստանի Հանրապետության նկատմամբ դրամական պահանջ, ապա այն կատարվում է հետևյալ ձևերով.

1. Համապատասխան գումարը վճարելով,

2. Մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ[1] տրամադրելով։

Այն պարագայում, երբ հնարավոր չի եղել մեկ ամսվա ընթացքում վճարման ենթակա պարտավորությունը կատարել, ապա պարտատիրոջ պահանջով տրամադրվում է փոխանցվող մուրհակ։ Դրա վրա հաշվեգրվում են Քաղաքացիական օրենսգրքով սահմանված չափով տոկոսներ՝ սկսած մուրհակի թողարկման օրվանից մինչև մուրհակի մարման օրը։

Համայնքի դրամական պարտավորություններով բռնագանձումն ընդհանուր կարգով տարածվում է համայնքի գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որն օրենքով արգելվում է սեփականության իրավունքով փոխանցել ֆիզիկական և իրավաբանական անձանց։

- **Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ ներկայացված դրամական պահանջների կատարումը.**

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ներառյալ նրա թեմերի) պաշտամունքային կառույցները, այդ կառույցների սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, ծիսական նշանակության և պաշտամունքի առարկաները, ինչպես նաև նման գույքի նկատմամբ դրա սեփականատեր չհանդիսացող Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ներառյալ նրա թեմերի) գույքային իրավունքները բռնագանձման ենթակա չեն։

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ներառյալ նրա թեմերի) մշակութային և կրթական հաստատությունների շենքերը, այդ շենքերի սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, մշակութային արժեք ներկայացնող շարժական գույքը, ինչպես նաև նման գույքի նկատմամբ դրա սեփականատեր չհանդիսացող Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ներառյալ նրա թեմերի) գույքային իրավունքները բռնագանձման ենթակա չեն, բացառությամբ պահանջատիրոջ պահանջի ապահովման համար գրավ դրված գույքի։

Նույնը վերաբերում է նաև այլ կրոնական կազմակերպություններին։

- **Սուբսիդիար պատասխանատվություն կրող պարտապանի գույքի և եկամուտների վրա բռնագանձում տարածելը**

Սուբսիդիար պատասխանատվություն կրող պարտապանը այն պարտապանն է, ով պատասխանատվություն է կրում միայն հիմնական պարտապանի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու պարագայում։

Եթե Դուք հանդիսանում եք սուբսիդիար պարտապան և պարտավորության կատարումը ակտով դրվել է ինչպես հիմնական պարտապանի, այնպես էլ Ձեզ վրա, ապա անհրաժեշտ է իմանալ, որ Ձեր գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն հետևյալ դեպքերում.

[1] Մուրհակն արժեթղթի տեսակ է։ Այն հավաստում է մի անձի կողմից մյուսի հանդեպ ունեցած որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը։

1. հիմնական պարտապանի գույքի տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու հիմքով լոտի մեկնարկային գինը ենթակա չէ նվազեցման, և հիմնական պարտապանը չունի բռնագանձման ենթակա այլ գույք կամ եկամուտներ,
2. հիմնական պարտապանը ճանաչվել է սնանկ, կամ հիմնական պարտապան բանկը, վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը կամ ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ ճանաչվել են անվճարունակ, բացառությամբ եթե կատարման ենթակա ակտով սահմանված պարտավորությունն ապահովված է գրավով,
3. եթե պարտավորությունների համար գրավ դրված գույքը իրացնելուց ստացված գումարը բավարար չէ պարտավորության կատարման համար։
4. եթե պարտապանի նկատմամբ հարուցված կատարողական վարույթն ավարտվել է, քանի որ.
   - հնարավոր չի եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը, և հարկադիր կատարումն անհնար է առանց պարտապանի անձնական մասնակցության.
   - հնարավոր չի եղել ապահովել հարկադիր կատարողի հասանելիությունը կատարման ենթակա ակտի կատարման համար անհրաժեշտ պարտապանի գույքին, կամ հնարավոր չի եղել պարզել այդ գույքի գտնվելու վայրը կամ գույքի վրա բռնագանձում տարածելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.
   - պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել.
   - ավարտվել են մահացած պարտապանի ժառանգի գույքի և եկամուտների վրա տվյալ ժառանգին անցած ժառանգական գույքի շուկայական արժեքի չափով բռնագանձում տարածելուն ուղղված կատարողական գործողությունները.
5. հիմնական պարտապանի նկատմամբ հարուցված կատարողական վարույթը պարտապանի գույքի բացակայության կամ դրա վրա բռնագանձում տարածելու անհնարինության պայմաններում ավարտվել է և պարտապանի եկամուտների չափը բավարար չէ դրանց վրա բռնագանձում տարածելով պահանջն առավելագույնը վեց ամսվա ընթացքում մարելու համար.
6. հիմնական պարտապանը մահացել է, և չկա արգելադրված գույք։